



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ՄՏԵՓԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ստեփան Պերճ Պողոս Փափազեան, դասատու, ազգային երեսփոխան, այցելութիւն տուաւ աշխարհին այն ձեւով, որով դարուս մեծ մարդերն իրարու կ'այցելեն. այսինքն կանխաւ հարցուց աշխարհին, թէ ժամանակ ունի՞ իր այցելութիւնն ընդունելու: Գինեմոլի մը քթէն աւելի կարմիր սահմանադրական, եւ ժողովրդեան իրաւունքներուն տենդէ մը աւելի ջերմ պաշտպան ըլլալով՝ նախապէս հասկնալ ուզեց, թէ մի գուցէ իր աշխարհ գալն վնաս է ազգային շահերուն. ուստի մօրն արգանդէն հարցում մը ներկայացուց հետեւեալ իմաստով.

«Իմ աշխարհ գալս ժողովրդեան իրաւունքներուն հակառակ է, թէ ոչ»:

Այս հարցումն կարծիքներու տարաձայնութիւն մը գոյացուց ազգին մէջ: Մէկ մասն որ ամիրայական էր, Փափազեանի ծնունդն հակառակ դատելով ազգային շահերուն, անոր հարցման հետեւեալ կերպով կը պատասխանէր.

«Եթէ ձեր աշխարհ գալը քիչ մը երկարաձգէք՝ ազգին մեծ ծառայութիւն մը ըրած կ'ըլլաք»:

Միւս մասն, որ ժողովրդական էր եւ որուն մէջ սխալմամբ սպրդած էին քանի մը ամբաստանուած կրօնաւորներ, որոնք արդարանալու համար անհամբեր Փափազեանի գալստեան կը սպասէին, անոր ծնունդը համաձայն կը կարծէին ազգային շահերուն եւ իր հարցման այս պատասխանը կու տային.

«Կարելի եղածին չափ շուտ գալու աշխատեցէք»:

Այս վերջին մասը մեծամասնութիւն կը կազմէ եւ կ'որոշէ, որ Փափագեան ազատ է աշխարհ գալու:

Փափագեան, որ աշխարհ գալէն աւելի կը փափաքէր Ղալաթիոյ խորհրդարանը գալ, որպէսզի հոն ամուր դիրք մը բռնելով՝ դիրութեամբ կարենար պաշտպանել ազգային շահերն, որոնց մէջ ինքն ալ խոշոր շահ մը ունէր, անշուշտ իբրեւ ժողովրդեան խոշոր մէկ անհատը, Փափագեան, կ'ըսեմ, ջանաց առջի բերան քիչ մը բարեփոխել այս որոշումն. իսկ երբ համոզուեցաւ, որ անկարելի էր՝ հաւանեցաւ Խասագիղ գալ 1839 թուականի նոյեմբեր ամսուն մէջ:

Այս տղան ծնելուն պէս թնրութեան մէջ ինկաւ. կենդանութեան նշան մը չէր երեւար իր վրայ եւ մանկաբարձն պատրաստուելու վրայ էր վերջին բառն ըսելով յայտնելու, թէ մեռած է, երբ յանկարծ կը տեսնէ, որ անոր լեզուն կը շարժուի: Այս լեզուն, որ քանի շարժէր կը մեծնար, երեք վայրկեանի մէջ մայր եկեղեցոյ աւագերէցին հողաթափին չափ մեծցաւ: Ներկայ եղողներն ապշած իրարու երես կը նայէին, երբ զարմացմամբ տեսան, որ երախային լեզուէն գեղեցիկ տղայ մը կը ծնէր: Մանկաբարձը նախ կը սոսկայ, բայց յետոյ յիշելով, որ Ադամայ կողէն կին ստեղծող ամենակարողն չտկարանար Փափագեանի լեզուէն ալ էակ մի լոյս բերել, կը վանէ սոսկումն, կը գրկէ լեզուածին մանուկն եւ խանձարուրի մը մէջ կը փաթաթէ գայն: Աւելորդ է ըսել, որ ժողովրդականութիւն էր այս լեզուածին եւ գրաւիչ մանկան անունը, քանի որ ազգին մէջ առած դարձած է այն խօսքը՝ թէ ժողովրդականութիւնը Փափագեանէ ծնունդ առած է: Չեմ կարծեր, որ գտնուի մէկն այսօր եւ ինձի հարցունէ, թէ ինչո՞ւ Ադամայ կողէն Եւա եւ Փափագեանի լեզուէն ժողովրդականութիւն ծնաւ. վասն զի ամենքս ալ գիտենք, որ մարդս ինք իր գլխուն տկար էակ մ'է եւ անպատճառ ընկերի պէտք ունի: Ադամ կնկան մը պէտքն ունէր, ստացաւ գայն կողէն. Պրահմա քահանայի, պատերազմողի եւ արհեստաւորի պէտքը կը զգար, ստեղծեց զանոնք՝ իր գլխէն հանելով առաջինը, բազուկէն քաշելով երկրորդը, ոտնէն առնելով երրորդը. Փափագեան ժողովրդականութեան համար կը հառաչէր, ընդունեց գայն իւր լեզուէն: Մոռնալու չէ, որ ապրելու համար ամէն մարդ իրեն ընկեր մը ստեղծելու հարկին մէջ գտնուած է. խմբագիրներն, որ ձմեռուան ածուխ գնելու համար Լուսինեան

կը ստեղծեն. երեսփոխաններ, որոնք իրենց շահուն համար ամեն օր նոր իրաւունքներ կ'ածեն, բանաստեղծներ, որ օր մը չեն կարող ապրիլ եթէ իրենց համար գովեստներ չքաշեն իրենց բարեկամներու բերնէն. դատաւորներ, որոնք Արդարութիւնը չտեսնելու համար Կուրութիւն ի լոյս կ'ածեն. վաճառականներ, որ ժամուան մը մէջ Ստութեան երկու հազար հաւկիթ մէկէն կը ձգեն. գրավաճառներ, որ օրացոյց մը ծախելու համար ճարտասանութեան ստեղծող կը հանդիսանան. խաբէբաներ, որ խաբելու համար իրենց աչերէն այնչափ արտօսը կը թափեն, որուն վրայ անգղիական Տեւասթեյլըն գրահատը նաւը կրնար ճամբորդութիւն ընել. երգիծաբաններ, որ ոչ թէ ապրելու, այլ շնեռնելու համար իւր ընթերցողներուն ծիծաղին արարիչ կ'ըլլան. գրագէտներ, որ կտոր մը հացի համար ժամուան մը մէջ իրենց ըղեղէն խմբագիր, դասատու, մատենագիր, թարգմանիչ կը հանեն. ընթերցողներ, որ ձրիաբար լրագիր կարդալու համար լրագիր ունեցողի մը քով շուտով բարեկամութիւն կը ստեղծեն եւ անոր գրպանէն լրագիրը կը քաշեն ըսելով, չեմ կարծեր, որ մէջը նոր բան մը ըլլայ. երիտասարդներ, որ պարի մէջ նոր կամուրջներ կը ստեղծեն օրիորդներուն ու տիկիներուն թելերուն տակէն անցնելու համար. ազահներ, որ այն ատեն իրենց գաւակ կը ստեղծեն, երբ գիշերօթիկ վարժարանի մը տնօրէնէն խօսք առնեն, որ իրենց գաւակն կէս թոշակով պիտի ընդունի վարժարանին մէջ. պճնող, պչրող տիկիներ եւ օրիորդներ, որ իրենց դէմքին վրայ ամեն օր նորանոր պատկերներ կը ստեղծեն. վերջապէս այս ամէնը չէ, որ ստեղծեց Ազգային ջոջերը: Արդ, ասոնք կարդալէն ետքը, ոչ ոք կը համարձակի քարկոծել Փափագեանը, թէ ինչո՛ւ ժողովրդականութեան ծնունդ տուաւ եւ ոչ թէ ուրիշ բանի մը. մանաւանդ թէ ամեն մարդ գովելու պարտաւոր է զինք այն նախատեսութեան համար, որով գուշակած է, թէ հայ ազգին մէջ աւելի կը վաստկի այն մարդը, որ ահ ժողովուրդ, վահ ժողովուրդ կը պոռայ, քան այն, որ ուղղական բան, սեռական բանի ըսած ժամանակը միւս կողմէն բաժանորդներուն ոտները համբուրելով կ'աղաչէ, որ հաճին իրենց բաժանորդագինը վճարել: Իսկ գալով այն հարցման, թէ Ժողովրդականութիւնը ինչո՛ւ անոր լեզուէն ծնաւ եւ ոչ սրտէն, կը պատասխանենք, որ մարմնակազմութեան տեղեկութիւն ունեցողներուն յայտնի է արդէն, որ լեզուն ասանկ բաներու ծնունդ տալու համար սրտէն շատ աւելի դիրութիւններ ունենալով, Ժողովրդականութիւնը չէր ուզած անոր սրտին նեղութիւն պատճառել: Փափագեան թէպէտեւ գիտէր, թէ ոչ ոք իրաւունք պիտի ունենայ զինքը քարկոծելու, բայց գիտնալով նաեւ թէ քարկոծելու համար

անպատճառ իրատունք ունենալու չէ, հրահանգ դրկեց կնքահօրն, որ անունը Ստեփաննոս դնէ:

Փափագեանին հանճարը լեզուին վրայ ամփոփուած ըլլալով, չորս ամիսէն խօսիլ սկսած էր եւ Լրագրի խմբագիրէն շատ աղէկ կը հասկցունէր իր միտքը:

Մանկութեան օրերը խօսելով անցունելէն ետքը, 1849-ին Խասագիղի թաղային վարժարանը մտաւ, նայելու համար թէ... ո՛վ կայ ներսը: Տարիի մը չափ հոն մնաց եւ սորվելէն ետքը, թէ բան մը սորված չէր՝ իրեն յարմար վարժարան մը փնտռելու համար դուրս եկաւ: 1850-ին Ազգային հիւանդանոցը գնաց: Եթէ Փանոսեանի տնօրէնութեան ժամանակ գացած ըլլար՝ անպատճառ խենդերու քովը պիտի դրուէր. վասն զի այս երկուքին կարծիքներն շատ հակառակ են իրարու: Քիչ ժամանակի մէջ շատ առաջ գնաց մայրենի լեզուին մէջ: Այնչափ լաւ սերտեց քերականութիւնն, որ շիտակ խօսիլ ու գրել սորվելէն ետքը, շիտակ շխօսիլ ալ սորվեցաւ բաւական: Այն ատենուան բոլոր քերականութիւններն աչքէ անցունելէն ետքը՝ ինքը գրեց հատ մը եւ անկից դաս տալ սկսաւ... իրեն: 1854-ին հողագործութեան դասախօսութիւն բացուած ըլլալով յիշեալ վարժարանին մէջ՝ սկսաւ մշակել նաեւ այս ճիղը, զոր բաւական ընդարձակեց: Հող ճանաչելու մասին իրեն հաւասարող չկար. չէր քաղեր ինչ որ կը ցանէր, շատ անգամ ելակ կը տնկէր եւ կաղամբ կը քաղէր: Ենթադրելով, թէ հողն ապերախտ չգտնուի իրեն՝ մենք կ'ըսենք, որ ժողովրդեան շահերը պաշտպանելու կոչուած մէկը դդումի կամ շողգամի իրատունքներու հետ զբաղելու ժամանակ չկրնար ունենալ:

1856-ին, դասատուութեան ճամբով ժողովրդականութեան հասնելու նպատակով, Իգմիրի Մեսրոպեան վարժարանի հայկաբանութեան դասատու կարգուեցաւ: Չորս գործողութիւնները միայն պարունակող համառօտ թուաբանութիւն մը հրատարակեց հոն: Ամէն անգամ, որ աշակերտներու մէջ թուաբանական խնդրոյ մը վրայ վիճաբանութիւն կ'ըլլար՝ ինքն միշտ մեծամասնութեան կողմը կը գտնուէր... ժողովրդականութիւն վաստկելու համար:

Վարժարանին մէջ օր մը կռիւ կը ծագի երկու աշակերտներու մէջտեղը, որոնք իրարու գլուխ կը պատռէին: Փափագեան կը տեսնէ եւ անմիջապէս անոնց քովը կ'երթայ:

Վարժապետ, առաջ ան ինձի գարկաւ:

Ինչո՞ւ գարկիր, պարոն:

Վարժապետ, մէկ անգամ չորսը մէկ կ'ընէ՝ կ'ըսէ:

Ան ալ կ'ըսէ, որ մէկ անգամ չորսը չորս կ'ընէ:

Ասոր համար իրարու գլո՞ւխ պատռելու է: Կարծիքներու ազատութիւնը յարգելու էք:

Բայց վարժապետ, կարելի՞ է, որ մէկ անգամ չորսը մէկ ընէ:

Կարելի է, որ ընէ:

Ի՞նչպէս հասկնալու է:

Քուէի դրէք, մեծամասնութիւնն ո՞ր կողմն որ գոյանայ, ուղիղն ալ այն կողմն է:

Տասնի չափ աշակերտներ խնդիրը քուէի կը դնեն եւ մեծամասնութիւնը կ'որոշէ, որ մէկ անգամ չորսը մէկ կ'ընէ:

Փափագեան աւելի եւս կը հաստատուի իր համոզման մէջ, թէ ռեւէ խնդրոյն մէջ յաղթանակը տանելու համար խելքէն աւելի մեծամասնութիւն ունենալու է մարդ մը:

Քանի մը տարի Իզմիր մնալէն ետքը 1859-ին Պոլիս դարձաւ եւ դասատութեան պաշտօնով նորէն Ազգային հիւանդանոցը մտաւ: Օրը երկու անգամ ատենաբանութիւն կ'ընէր աշակերտներուն, ոչ թէ անոնց բան մը խօսելու, այլ վարժուելու համար ատենախօսութեան, որով օր մը աջակողմեան երեսփոխաններու գլուխը պիտի ճաթեցունէր Ազգային ժողովոյ մէջ: Ա մեն օրեայ վարժութիւններու շնորհիւ այնքան յառաջդիմութիւն ըրաւ խօսելու մէջ, որ եթէ ունկնդիրներն երկաթեայ ականջ ունենային՝ ամիս մը շարունակ կը խօսէր առանց ամենափոքր նեղութիւն մը զգալու: Ճատին ուժգնութիւն տալու համար բան մը չէր խնայեր. եթէ խօսքերը տկար գտնուէին՝ կը դիմէր ձեռներուն, որ

խօսքերէն աւելի գորատր էին, ձեռներովը կը զարնէր առջելը դրուած գրասեղանին եւ կը կոտրէր զայն: Հերակղէս կը ձեւանար, երբ լու մը սպաննել հարկ ըլլար: Ունկնդիրներն արթնցնելու համար իշուն ստուերին չէր դիմեր, այլ բոլոր ուժովը կը պոռար: Սովորութիւն ունէր խօսած ժամանակ երբեմն քանի մը քայլ առնել դէպի ձախ եւ երբեմն դէպի աջ վերջերս կարծիքներն ալ ոտներուն օրինակին հետեւեցան, երեսփոխանական ժողովոյ մէջ չէր մոռնար նաեւ չորս քայլ դէպ առաջ գալէն ետքը չորս քայլ ետ երթալ. հոգեփոխութեան հաւատացողները կ'ըսէին. ահա Կիկերոն, որ քատրիլ կը խաղայ: Շատ մը կրօնատրոնք կ'երթային անոր ատենաբանութիւնները մտիկ ընելու եւ համոզել կ'աշխատէին զինքը, որ վարդապետ ձեռնադրուի. իսկ Փափագեան նորէն բեմ ելնելով ատենաբանութեամբ մը կը մերժէր անոնց առաջարկութիւնը: Բացի հիւանդանոցի վարժարանէն մայրաքաղաքիս գրեթէ բոլոր վարժարաններուն մէջն ալ դասախօսութիւն ըրած եւ բաւական աշակերտներ ընծայած է ազգին: Երկար տարիներ դասախօսութիւն եւ տնօրէնութիւն ըրած է Ղալաթիոյ վարժարանին մէջ, զոր միշտ թաղային միւս վարժարաններէն բարձր դիրքի մը մէջ պահելու յաջողած է եւ գործող մարդ ըլլալն անհերքելի կերպով հաստատած է:

1860-ին սկսաւ դասագիրք յօրինել իւր աշակերտներուն համար: Յօրինեց համառօտ Ազգային պատմութիւն մը, որուն մէջ թագաւորներուն այցետոմսերը միայն գրուած էին: Աշակերտներն մարգպաններուն, պատրիկներուն, իշխաններուն եւ թագաւորներուն անունները միայն կը սորվէին եւ կէս ժամէն ետքը կը մոռնային: Տիկին Մարթա պատուհանին առջելը նստած՝ փողոցէն անցնող մէկու մը վրայ աւելի կատարեալ տեղեկութիւն կրնայ տալ, քան Փափագեան իւր յօրինած ազգային պատմութեամբը հայ դիւցազներուն վրայ եթէ չէք հաւատար, բացէք անոր պատմութիւնը, որպէսզի տեսնէք միայն հետեւեալ հարցումները.

Ո՞վ էր Հայկ.

Բեւն որո՞ւ զուակ է.

Սա մարդն Արամին աներձագը չը՞ նմանիր.

Արային հայրը մօրուք ունէ՞ր.

Տիգրանին քեռա՞յրն է սա:

Պէտք է խոստովանիլ, որ համառօտութեան մէջ մինակ չէ Փափագեան, մրցողներ ունի իւր դէմ. եւ եթէ այս մրցումը շարունակուի՝ քանի մը տարիէն տասը տողի մէջ պիտի կրնանք կարդալ մեր Ազգային պատմութիւնը: Այդ պատմութիւններու մէջ, համառօտութեան համար, մօրուքը ճերմկցած անձերն նորածին երեխաներ ներկայացուած են, դարերը վայրկեանի մը մէջ անցած են: Ծննդոց գիրքը բաղդատմամբ այն պատմութիւններուն՝ ընդարձակ գործ մը կրնայ համարուիլ: Հայկայ անունը գիտնալն անոր վրայ կատարեալ տեղեկութիւն առնել է, իսկ անոր բազկին վրայ ծանօթութիւն ուզելն մեծ ժամավաճառութիւն է: Հրատարակեց նաեւ Քերականութեան ձագ մը, որուն վրայ, ալ խօսելու հարկ չենք տեսներ, քանի որ հաստատուած ճշմարտութիւն մ'է այսօր, թէ լաւագոյն դասագիրքերն անոնք են, որ շատ վաստակ կը ձգեն անոնց հեղինակներուն: Փափագեան իւր հասուցած դասատուներովը Հայաստանի մէջ կը տարածէր իւր յօրինած դասագիրքերը:

1862-ին իւր հեզահամբոյր բնատրութեան շնորհիւ Ղալաթիոյ թաղական խորհրդոյ անդամ ընտրուեցաւ, զի 199ի բանն, թէ յաթոռ Մովսէսի նստան փարիսեցիք: Ղալաթիոյ խորհրդարանն, որ երբեմն Պրոպատիկէ աւագան եւ երբեմն ալ Ղալաթայ օջախը յորջորջուած էր, ժողովրդականութեան կեդրոն համարուած էր եւ այնչափ ազդեցութիւն ունէր, որ պատրիարքարանի յանցաւոր դատածն անմեղ կը հրատարակէր: Ամբաստանուած կրօնատրները հոն մտնելուն պէս կը սրբուէին, ինչպէս նաեւ շամբաստանուածներն ալ կը պղծուէին: Փափագեան՝ ժողովրդականութիւն վաստկելու նպատակով, միշտ տկարները կը պաշտպանէր, թէպէտեւ ընդհանրապէս կը պաշտպանէր կղերն, որուն ձեռամբ, շիտակը խօսելու համար, ազգային նուիրական իրաւունքներն վտանգէն ազատած է: Բերայի գերեզմանատան խնդրոյն մէջ կղերական դասուն առաջնորդ եղած է: Տասներկու տարի շարունակ թաղականութիւն վարեց հակառակ սահմանադրութեան, որուն կէտ առ կէտ գործողութեան այնքան սիրահար էր եւ է մինչեւ հիմա, բայց որովհետեւ իւր պաշտօնավարութեան ժամանակ վնաս մը չէ հասցուցած եկեղեցոյն՝ սահմանադրութիւնն ալ

մեղադրած չէ զինքը: Եկեղեցոյն եկամուտներն աւելցուցած է եւ Ղալաթիոյ հրդեհէն երբ մոխիր դարձան եկեղեցոյն կալուածները՝ Փափագեան անոնց փոխարէնը կանխիկ առաւ ապահովութեան ընկերութիւններէն: Այդ կալուածներուն գոյութիւնն, ինչպէս նաեւ Կեդրոնական վարժարանին շինութիւնը մեծաւ մասամբ իր գործունէութեանը պարտաւոր է ազգը: Ահա գործող մարդ մը, որ հարուստներ կ'արժէ: Ազգային շահերուն համար երբ հոգին տալ կը խոստանար՝ շատերը կը զարմանային, թէ ի՞նչպէս կրնայ ապրիլ մարդ մը, որ ինքզինքը բոլորովին ազգին նուիրած է եւ անոր գործերէն վայրկեան մը բաժնուիլ չուզեր. անոնք՝ որ գործի մարդ էին եւ տասնըհինգ օրը անգամ մը հազիւ կրնային ժողովոյ մը ներկայ գտնուիլ՝ երբ կը տեսնէին Փափագեանն, որ առաւօտէ մինչեւ երեկոյ, երեկոյէ մինչեւ առաւօտ ազգային շահերը պաշտպանելու զբաղած է՝ կը հարցնէին իրարու, թէ այս մարդն իր շահերը ե՞րբ կը պաշտպանէ:

1863-ին Ժամանակ անունով հանդէս մը հրատարակեց եւ բաւական տուժեց, ինչպէս որ սովորութիւն է տուժել ամէն անոնց, որք յիմարութիւն կամ դժբախտութիւն կ'ունենան թուրքի մը տակ խմբագիր ստորագրելու: Փափագեան՝ Ժամանակէն վնասելուն պէս Ժամանակ հրատարակելու ժամանակը չէ, ըսելով, դադրեցաւ ազգին ծառայելէ խմբագրութեամբ եւ ուխտ ըրաւ, որ Ղալաթիոյ խորհրդարանէն դուրս չելնէ եւ հոն, միայն հոն ծառայէ ժողովրդեան: Այս ուխտով կարծես հասկցնել ուզեց, թէ պատրաստ է ազգին շահերուն պաշտպան կանգնիլ, որչափ ատեն որ իրենները չվնասուին:

1870-ին ազգային ժողովոյ երեսփոխան ընտրուեցաւ եւ ձախակողմեան կուսակցութեան գլուխ եղաւ: Կը փափաքէր, որ ամէն օր ուրբաթ ըլլար, որպէսզի ժողով գումարուէր եւ երթար իր լեզուին հանճարը ցոյց տար: Շատ գիշերներ քնոյն մէջ քուէ, քուէ կը պոռար այնպիսի ձայնով մը, որ դրացիներուն քունը կը խռովէր: Գիշեր կամ ցերեկ ուր որ փոքր զանգակի մը ձայն լսէր՝ իսկոյն երեսփոխանական ժողով կը վազէր: Օր մը բացակայ եղած չէ, միշտ որոշեալ ժամուն ներկայ կը գտնուէր, եւ եթէ ընկերներն եկած չըլլային՝ իր աթոռը մէջքէն չուանով մը կապելով դուրս կ'ելնէր, որպէսզի ուրիշ մը չյափշտակէ զայն: Մեծամասնութեան գործած հրաշքներն յիշելով, երանի կը կարդար իր կատուին՝ որուն կ'ըսէր.

«Կատու, դուն ինձ զօրաւոր ես. եթէ երեսփոխան ըլլայիր՝ չորս ձայն պիտի ունենայիր, մինչդէռ ես երկու ձայն ունիմ»:

Նախատեսած ըլլալով, որ հարիւր քսան երեսփոխաններու մէջ քսանին կարծիքն իրենց գլխուն մէջ է, իսկ հարիւրին կարծիքն իրենց ձեռներուն մէջ՝ գլուխի տեղն ձեռն կը փնտռէր, եւ եթէ բաւական չգտներ, հիւանդանոցներ կ'երթար եւ բժիշկներուն կը պատուիրէր, որ եթէ կտրուելու ձեռներ կան՝ չնետեն գանոնք, այլ իրեն ծախեն: Իր նպատակին հասնելու համար ժողովրդականութիւնը կ'առնէր բերանն եւ այնպէս կը ստնէր ժողովրդ: Ժողովրդեան շահերն, ժողովրդեան իրաւունքներն թեւ թեւի տուած կը շրջէին իւր ատենաբանութիւններուն մէջ, որոնք յաճախ կը ծափահարուէին ժողովրդէն եւ երբեմն ալ ժողովրդեան շահերէն: Անուշ ապուրն առանց չամիչի եփելն ժողովրդեան շահերուն վնասակար կը համարէր եւ երբ երեսփոխան մը զինքն ընդմիջէր ժողովրդեան իրաւունքներն օտարի կը մատնուէին: Քանի մը տարիներ շարունակ կռուեցաւ աջակողմեաններուն դէմ այն եղանակաւ, որ երեսփոխանական ժողովէն դուրս հակառակասիրութիւն կը նշանակէր: Իր սկզբունքն էր, սպիտակ ըսել այն բանին, զոր սեւ կ'անուանէր աջակողմն, որուն մէջ կային նաեւ Էֆենտիներ, որոնցմէ իւր կուսակցութեան մէջ ալ կը գտնուէին: Ինչ որ Էֆենտիներուն հակառակ էր, ազգին շահերուն համաձայն էր. իսկ երբ հարկ եղաւ վերջերս ազգային ժողովէն դուրս գործել, ձախակողմեաններուն քով պատիւը քիչ մը կոտրեցաւ, վասն զի աջակողմեան Էֆենտիներուն յարեցաւ եւ չհասկցուեցաւ, թէ առաջ բարի էր եւ Էֆենտիներուն յարելով՝ չար եղաւ, թէ չար էր եւ Էֆենտիներուն միանալով՝ բարի եղաւ: Զինքը սուրբերու քով դասող թերթերն չուանով մը սատանաներու բնակարանը իջեցուցին զինքը եւ անոնք, որ Մեփիստոփելի ընկեր կը ճանաչէին զինքը, երկինք բարձրացուցին զայն. իսկ մենք առանց այս կամ այն կողմ միտելու՝ աթոռ մը տուինք իրեն, որ նստի սատանայի եւ սուրբի մէջտեղը եւ ինքն ալ ընդունելով մեր ընծայած աթոռն՝ գնաց նստաւ Պերլին գացող երկու պատուիրակներու մէջտեղ:

1872 թուականին անդամ ընտրուեցաւ Քաղաքական ժողովոյ այն պատրիարքին օրով, զոր Ժամանակաւ Հրեշտակ Հայաստանի կը հռչակէր աշխարհի: Իւր բոլոր ուժովը հալածեց եւ ստիպեց Հրեշտակն իւր հրաժարականը տալ. Հրեշտակն տուաւ իր հրաժարականը, Փափագեանինն առնելէն ետքը:

Այս անձն ազգային ժամանակակից կենդանի պատմություն մ'է, չկայ դէպք մը, որ իրեն ծանօթ չըլլայ:

Փափագեան գիրուկ եւ գեղեցիկ մարդ մ'է. եթէ կին ըլլար՝ չորս կողմը բուրդ թխմելու պէտք չպիտի ունենար: Փորը ոչ նուագ մեծ է այն համբաւէն, զոր կը վայելէ իբրեւ գործող մարդ: Գրպաններուն մէջ անպակաս են ծրագիրներ, կանոնագիրներ եւ ուրիշ շատ մը թուղթեր, զորս կը սրբագրէ: Իւր դէմքը տեսնողը կը կարծէ, թէ դրամական սաստիկ տագնապի մը մէջ գտնուելով՝ իր ամէնէն մտերիմ բարեկամներէն մէկուն դիմած է այն յոյսով, որ մէկ խօսքով երկու հարիւր ոսկի պիտի կրնայ առնել իրմէ, եւ, երբ իր առաջարկութիւնն ըրած է՝ հետեւեալ պատասխանն ընդունած է իր բարեկամէն.

Եթէ կ'ուզէք որ մեր բարեկամութիւնը հաստատ մնայ՝ կը խնդրեմ, որ ասանկ առաջարկութիւններ չընէք ինձի: